Մրցույթի հայտարարություն

Վայոց ձորի մարզի Քարագլխի միջն. դպրոց ՊՈԱԿ
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար
ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական
հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ , 3-րդ և 4-րդ
կետերի համաձայն՝ Վայոց ձորի մարզի Քարագլխի, Աղնջաձորի , Թառաթումբի միջնակարգ դպոցների միացիալ
կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ Քարագլխի միջն. դպրոցի տնօրենիպաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:
1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր
պայմաններն են՝
1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են Քարագլխի միջնակարգ դպրոցում
2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը9^{00} -ից մինչև
ժամը 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝
տոնական և հիշատակի օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2021թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 14 ^{00}-ին,

Վայոց ձորի մարզի Քարագլխի միջն. դպրոց ՊՈԱԿ 7փ.3շ.
Տեղեկությունների համար դիմել Վանուհի Մելքոնյանին 098301580

Արձանագրություն N 2

Վայոցձորի մարզի Քարագլխի ,Աղնջաձորի , Թառաթումբի միջն. Դպրոցների միացիալ կառավարման խորհրդի նիստի կայացած 28.10.2021թ .մասնակցությամբ 15 անդամների:

Օրակարգ

1 Քարագլխի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարում:

Զեկուցող՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ալեքսանյան

Որոշում

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշման 2,3և 4 կետերը՝ խորհուրդը որոշեց.

Հայտարարել մրցույթ Քարագլխի միջն. Դպրոցի գործադիր տնօրենի թափուր տեղի համար:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. դեկտեմբերի 3-ին :

Խորհրդի նախագահ՝ /Ա.Ալեքսանյան/

քարտուղար՝ /Վ. Մելքոնյանը/